Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 481-Լ հրամանի
Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12637/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան

29/04/2021թ.

1. ՀԱՅԿԱԶ ՄԱԹԷՈՍԻ ՊԷԹԷՐԵԱՆ
(հարկային իրավախախտում կատարած անձի անունը, ազգանունը,
կազմակերպության լրիվ անվանումը, ՀՎՀՀ (առկայության դեպքում)

2.ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ՆՈՐ ԱՐԵՇ 22 Փ.,61,Տ
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. 23314816
(ֆիզիկական անձի ՀԾՀ , ՀՎՀՀ)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից.

1) 14/02/2020 թվականին օտարվել է 23/09/2017 թվականին ձեռք բերված MERCEDES-BENZ SLK 230 KOMPRESSOR մոդելի 1999 թվականի արտադրության 193 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը «ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02811826), որի պայմանագրային արժեքը կազմել է 333,000 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 29-րդ հոդվածի՝ հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող)՝ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունն է, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, որի վրա, Օրենսգրքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը կամ վճարները հաշվարկելու, պահելու (գանձելու) և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը:

Օրենսգիրքի 269-րդ հոդվածի համաձայն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից):

Հաշվի առնելով այն, որ «ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն չի հանդիսանում հարկային գործակալ՝ ֆիզիկական անձի մոտ վերը նշված օտարման գործարքի մասով առաջանում է եկամտային հարկ հաշվարկելու և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորություն:

Սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից միկրոձեռնարկատիրության սուբյեկտից ստացվող ամբողջ եկամուտների մասով ֆիզիկական անձը եկամտային հարկը հաշվարկում է օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձի կողմից վերը նշված հարկվող գործարք(ներ)ի մասով, հարկային մարմին չի ներկայացվել 2020 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել արդյունքում առաջացող հարկային պարտավորությունը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձի կողմից 2020 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ չներկայացնելու պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվել պայմանագրային արժեքի 23 տոկոսը, որը կազմում է ՝ 76,590 դրամ (333,000*23%):

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով, որը կազմում է՝ 276 դրամ (29/04/2021 թվականի դրությամբ) [76,590x0,04%x8]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 29/04/2021 թվականի դրությամբ կազմում է 76,866 դրամ, որից հարկ՝ 76,590 դրամ, տույժ՝ 276 դրամ:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 29/04/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ **Աննա Շահբազյան**